

**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՆԵՓԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ, ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Խաչատրյան Մ.Վ., Էլիազյան Դ.Ս., Ղազարյան Գ.Ղ., Ոսկանյան Պ.Ս.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածում ներկայացված են կանեփի արտադրման, վերամշակման և փորձաքննության անցկացման խնդիրները, ինչպես նաև դրանք կարգավորող օրենսդրական դաշտում առկա բացերի վերաբերյալ վերլուծությունը: Ընդգծվում են տեխնիկական կանեփի օգտագործման բազմակի հնարավորությունները և առավելությունները՝ արժեքավոր բուսական յուղի, մանրաթելի, ցելյուլոզի, շինանյութի և այլնի ստացման համատեքստում: Հատկապես առանձնացվել և ներկայացվել են արտադրական կանեփի բնակլիմայական պայմաններում վերամշակված տեղական սորտերի բացակայության, նմուշառման, նմուշների հետազոտության և այլ խնդիրներ: Հոդվածում դիտարկվում են նաև թմրամիջոցների և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի քաղաքականության և կանեփի արտադրության զարգացման միջև հակասությունները:

Բանալի բառեր. կանեփի բույս, արտադրական կանեփ, տեղափոխականաբինոլ, կանաբինոլ, կանաբիդիոլ, թմրանյութեր:

Բուսաբանական տեսակետից կանեփ բույսի հայտնի տեսակները՝ Սովորական կանեփը (*Cannabis Sativa L.*), Հնդկական կանեփը (*Cannabis Indica Lam*) և Մոլախոտային կանեփը (*Cannabis ruderalis janisch.*) ընդհանրացվում են կանեփ տեսակի բույսով (*Cannabis*) անկախ այն հանգամանքից, որ դրանք ունեն ինչպես ֆենոտիպային, այնպես էլ ֆիզիոլոգիական տարբերություններ՝ ըստ քիմիատիպի: Այդ իսկ պատճառով թմրամիջոցների մասին Միավորված ազգերի կազմակերպության Միացյալ կոնվենցիան 1961 թվականին (փոփոխված 1972թ.) թմրամիջոցների ցանկում ներառել է կանեփ բույսը թմրամիջոցներ պարունակող բույսերի շարքում և պարտավորեցրել է մասնակից երկրների կառավարություններին, որպեսզի խստորեն վերահսկեն կանեփի բոլոր սորտերի մշակումը [1,2]:

Ներկայումս աշխարհի ավելի քան 30 երկիրներում օրինականացվել է արդյունաբերական նպատակներով կանեփի աճեցումը՝ պայմանավորված կանեփի արտադրության զարմանալի ներուժով (արդյունավետ ներդրումներ, եկամտի կայուն աղբյուր և աշխատատեղեր հազարավոր մարդկանց համար): Արտադրական կանեփի ցողուններից, որոնք կազմում են ընդհանուր չոր զանգվածի մոտ 60 տոկոսը, ստացվում է մանրաթել, որն էլ դարձել է շարունակ օգտագործվել է պարան և կտավ պատրաստելու համար, իսկ ներկայումս այն օգտագործվում է հարմարավետ, շնչող հագուստ և տնային գործվածքներ պատրաստելու համար:

Թղթակցական հասցեն՝ Խաչատրյան Մելանյա Վալերիկի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի նյութագիտական փորձաքննությունների բաժնի թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի փորձաքննությունների բաժանմունքի փորձագետ, Հայաստան, ք.Երևան, Իսակովի պող. 24, e-mail: melvg2007@mail.ru

Արտադրական կանեփն ունի լայն կիրառություն նաև բժշկության, կոսմետոլոգիայի, բիոպլաստիկայի, շինարարության, սննդի և այլ բնագավառներում:

Այս ամենի հետ մեկտեղ, հաշվի առնելով, որ կանեփը հայտնի է հանրության շրջանում որպես բույս, որից կարելի է պատրաստել թմրամիջոցներ, ինչպիսիք են մարիխուանան, հաշիշը, հաշիշի յուղը և այլն, անհրաժեշտ է կանեփի արտադրության ողջ գործընթացի նկատմամբ կազմակերպել պատշաճ վերահսկողություն:

Ընդունված է համարել, որ տեխնիկական կանեփը տարբերվում է թմրանյութ պարունակող կանեփից հիմնականում տետրահիդրոկանաբինոլի (THC) պարունակությամբ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ներկայացված տվյալների կանեփի ծաղկաբույլերում THC-ն 0,1%-ից ոչ ավել քանակությամբ սորտերը համարվում են թմրանյութ չպարունակող: Ռուսաստանում թույլատրելի THC-ի պարունակությունը կանեփի բույսերում կազմում է 0,1%, մինչդեռ ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Չինաստանում և Եվրոպական մի շարք այլ երկրներում՝ 0,3% [3]:

ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի հուլիսի 15-ին ընդունվեց «Արտադրական կանեփի արտադրության, ներմուծման, արտահանման կամ մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզավորման հայտի ձևերը և այլ գործունեության տեսակների իրականացման լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» որոշումը [4]:

Սույն աշխատանքի նպատակն է՝ վերլուծել արտադրական կանեփի տեղական բնակլիմայական պայմաններում մշակված սորտերի հետագա վերամշակման անհրաժեշտությունը, արտադրական կանեփի վերամշակման և փորձաքննության անցկացման հնարավոր խնդիրները, ինչպես նաև վերլուծել թմրամիջոցների և դրանց շրջանառության դեմ պայքարի քաղաքականության և կանեփի արտադրության զարգացման միջև հակասությունները:

Արտադրական կանեփը համարվում է ամենավաղ ժամանակների արդյունաբերական բույս, որն ավելի քան 2800 տարի առաջ աճեցվել է Չինաստանում: Բույսի կենսաբանորեն ակտիվ միացությունները կոչվում են կանաբինոիդներ: Առնվազն 30 տարբեր կանաբինոիդներ են առանձնացվել կանեփի բույսից: Գերակշռող միացություններն են տետրահիդրոկանաբինոլ (THC), կանաբիդիոլ (CBD), կանաբինոլ (CBN), տետրահիդրոկանաբինաթթու (THCA), կանաբիդիոլաթթու (CBDA) և կանաբինոլաթթուն (CBNA), որին հաջորդում են կանաբիգերոլաթթուն (CBGA), կանաբիքրոմենաթթուն (CBCA), կանաբինոդիոլաթթուն (CBNDA) և այլն: Այս միացությունների կոնցենտրացիան կախված է բույսի տեսակից, տարիքից, աճի պայմաններից (սնուցում, խոնավություն, լույսի մակարդակ), բերքահավաքի ժամանակից և պահպանման պայմաններից: Կանաբինոիդների կոնցենտրացիան բույսի տարբեր մասերում տարբեր է, ընդ որում ամենաբարձր կոնցենտրացիաները գլխիկների և ծաղիկների մեջ է, որին հաջորդում են տերևները, ցողունները, իսկ արմատներում և սերմերում դրանց կոնցենտրացիան զգալի նվազում է, որոշ բաղադրատարրեր անգամ չեն հանդիպում [5,6]:

Տեխնիկական կանեփի օրիանականացման պատճառները բազում են: Բույսը յուրահատուկ է նրանով, որ արագ է աճում, չի պահանջում հատուկ աճեցման պայմաններ

(քիմիկատներ), ինտենսիվ ոռոգում և այլն, արդյունաբերական նպատակներով օգտագործվում է բույսի բոլոր հատվածները՝ առանց բացառության, ինչը տնտեսապես շահավետ է արդյունաբերության զարգացման նպատակով մատչելի, էկոլոգիապես մաքուր ուղիներ մշակելու համար: Այսօր արդեն տարբեր բուսաբույծների կողմից մշակվել են տետրահիդրոկանաբինոլի նվազագույն պարունակությամբ (քիչ, քան 0,1 %) տասնյակից ավելի (տեղական սորտեր ՌԴ-ում՝ Միլենա, Սուրսկայա, Վերա, Նադեժդա և այլն) [7]:

Համարվում է, որ շուտով ամբողջ աշխարհում տեխնիկական կանեփի արտադրության մասշտաբները կգերազանցեն և աստիճանաբար կփոխարինեն բամբակի և սոյայի արտադրությանը: Դա պայմանավորված է մի կողմից բամբակի համեմատ աճեցման համար նվազագույն ջրի պահանջով, մյուս կողմից՝ արտադրանքի անհամեմատ բարձր որակով: Դա է վկայում նաև մի շարք հանրահայտ հագուստի արտադրման բրենդների կողմից կանեփից ստացված թելի հավելումը բամբակին, ինչը հագուստին տալիս է լրացուցիչ որակ և փափկություն[8]:

Արտադրական կանեփի օրինական աճեցումը, արտադրությունը և օգտագործումը զգալիորեն աճել է 2000 թվականից: Կանեփի ընդհանուր օրինական արտադրությունը 2020 թվականին կազմել է 650,8 մլն տոննա [9]: Ներկայումս տեխնիկական կանեփը մշակվում կամ օգտագործվում է արդյունաբերության մեջ ավելի քան 40 երկրներում: FAO-ի տվյալներով 2019 թվականին կանեփի ցանքատարածությունն աշխարհում կազմում է մոտ 300-400 հազար հա, առաջատար երկրներն են ԱՄՆ-ը՝ 120 հազար հա, Չինաստանը՝ 100 հազար հա, Կանադան՝ 60 հազար հա [10]:

Այդուհանդերձ, օրինականացումը միայն առաջին քայլն է, քանի որ կարող են առաջ գալ հակասություններ թմրամիջոցների և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի քաղաքականության և կանեփի արտադրության զարգացման միջև, ինչպես նաև հայտատուի իրավունքների խախտումներ, կապված արտադրական կանեփի ներմուծված սորտերի աճման ֆունկցիոնալ փոփոխությունների հետ: Օրինակ ՌԴ-ի ողջ տարածաշրջանում մշակված և սերտեֆիկացված են 28 տեսակի սորտեր, սակայն որպես հիմնական սորտեր մշակելու համար ընտրված են ընդամենը 3-ը, ինչը պայմանավորված է հիմնականում բույսի փոփոխվող, ոչ կայուն, կլիմայական պայմաններին ադապտացվելու ընդունակությամբ:

Գոյություն ունեն երկու ռիսկային գործոնների՝

1. թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, երբ «Արտադրական կանեփի մշակություն» հասկացության տակ ապօրինաբար կմշակվեն և կշրջանառվեն տետրահիդրոկանաբինոլի բարձր պարունակությամբ կանեփի բույսեր, որոնց վերահսկողությունը հնարավոր չի լինի կառավարել,

2. շահառուի ձախողում, երբ անսպասելիորեն (բույսի աճեցման ինչ որ փուլում) կմեծանա տետրահիդրոկանաբինոլի տոկոսային պարունակությունը թույլատրելի արժեքից:

Համաձայն ՀՀ կառավարության «Արտադրական կանեփի արտադրության, ներմուծման, արտահանման կամ մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզավորման հայտի ձևերը և այդ գործունեության տեսակների իրականացման լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» 15.07.2021թ.-ի որոշման 2.12-ից 2.14 կետերի՝

հայտատուն արտադրական կանեփի արտադրության գործունեության իրականացման լիցենզավորման համար լիազորված մարմին է ներկայացնում՝

- արտադրական կանեփի բույսերի (սորտերի) բնութագիրը, որոնք առաջարկվում է մշակել և վերամշակել, առաջարկվող բույսերի (սորտերի) աճեցման մանրամասները (կետ 12),

- տետրահիդրոկաննաբինոլի (THC) և կանաբիդիոլի (CBD) ակնկալվող կոնցենտրացիան, որը պարունակվելու է առաջարկվող արտադրական կանեփի բույսերում կամ մշակության, վերամշակման արդյունքում ստացվող ապրանքատեսակում (կետ 13),

- լիցենզիայի համար հայցվող ժամանակահատվածում արտադրվող և (կամ) մշակվող և (կամ) վերամշակվող արտադրական կանեփի, արտադրական կանեփի բույսերի կամ արտադրական կանեփի բուսախեցի (կաննաբիդիոլի յուղ) առավելագույն չափը՝ ըստ տարիների (կետ 14):

Սակայն նշված որոշմամբ ներկայացված դրույթների վերլուծությամբ հարկ է նաև ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Բերված չեն սորտերի կոնկրետ տեսակներ, որոնք թույլատրելի են արտադրական կանեփի աճեցման համար: Արտասահմանում, և մասնավորապես օրինակ Ռուսաստանում իրականացվում է արտադրական կանեփի բույսի փորձարկում և տեղայնացում տվյալ տարածաշրջանի համար և դրանք ներառված են տվյալ տարածաշրջանի պետական ռեգիստրի բույսերի մշակման համապատասխան ցանկերում [7]:

2. Քանի որ մշակվող բույսերի փաստաթղթային բնութագիրը (արտաքին չափեր, բաղադրության, տետրահիդրոկաննաբինոլի կոնցենտրացիա և այլն) կարող է փոխվել կախված աճեցման տարբեր պայմաններից՝ թե՛ մարդու գործնով պայմանավորված և թե՛ ինքնաբերաբար (ոռոգման համար հողի և ջրի օպտիմալ pH մակարդակի խախտում, գերսնում, լույսի և խոնավության փոփոխություններ, երկար վեգետատիվ շրջան, արագ ծաղկում և այլն:) Նշված հանգամանքն առաջին հերթին կարող է վնասել հայտատուին՝ առաջացնելով իրավական խնդիրներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ արտադրական նպատակներով բույսի աճեցումը պետք է վերահսկվի նաև ըստ ելային բույսի աճեցման, այսինքն՝ նույն բույսը չպետք է վերաաճեցնել չորս անգամից շատ, քանի որ կարող է խախտվել տետրահիդրոկաննաբինոլի տոկոսային պարունակությունը: Ապացուցված է, որ տետրահիդրոկաննաբինոլը պարունակվում է կանեփի ցանկացած տեսակի բաղադրության մեջ, բայց դրա կոնցենտրացիան նույնը չէ և կտրուկ տատանվում է ոչ միայն տեսակից տեսակ, այլև կարող է փոփոխական լինել նույնիսկ նույն տեսակի բույսի ներսում՝ կախված չնչին պայմանների փոփոխություններից: Հաշվի առնելով ներկայիս սարքավորումների բարձր զգայունությունը և վերահսկվող չափաբաժնի փոքր արժեքը՝ տետրահիդրոկաննաբինոլի բաղադրության տասնորդական մասով փոփոխությունը կարող է բերել օրենքով նախատեսված պատասխանատվության հիմքերի:

3. Բերված չեն արտադրական կանեփի համար նախատեսված հատուկ նմուշառման մեթոդներ: Ինչպես նշվեց, տետրահիդրոկաննաբինոլի տոկոսային պարունակությունը բույսի տարբեր հատվածներում տարբեր է, ինչը նշանակում է, որ հետազոտելի նմուշները չեն կարող համաչափ լինել, և նմուշապատրաստումը պետք է լինի խիստ կանոնակարգված: Նույնիսկ արտասահմանյան զարգացած երկրներում արտադրական կանեփի նմուշառման համար

հատուկ մեթոդիկա մշակված չէ: Նմուշառումն իրականացվում է թմրամիջոցների նմուշառման մեթոդիկայով, և համաձայն որի՝ նմուշառումն իրականացվում է բույսերի թմրակտիվ բաղադրիչների առավել մեծ պարունակությամբ հատվածների ընտրությամբ: Ստացված արդյունքը տարածելով ամբողջ բույսի վրա՝ ստացվում է թմրակտիվ բաղադրիչների արհեստականորեն բարձր արժեք, որն էլ արտադրական կանեփի պարագայում վիճելի է: Համաձայն մասնագիտական գրականության տվյալների ծաղկման սկզբից տրիխոմները սկսում են ակտիվորեն արտազատել խեժ, որի մեջ THC-ի կոնցենտրացիան աստիճանաբար աճում է: Երբ խեժի երանգը վերածվում է կաթնայինի, սկսվում է բերքահավաքի համար բարենպաստ շրջան, որն էլ կարող է տևել կախված բազմազանությունից՝ մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ: Հետագայում խեժը ձեռք է բերում սաթի և նույնիսկ կարմրավուն երանգ: Այս ժամանակահատվածում THC-ի կոնցենտրացիան սկսում է նվազել THC-ի աստիճանական քայքայման պատճառով: Կատարելով նմուշառում տվյալ ժամանակահատվածում կարող են ստացվել THC-ի կոնցենտրացիայի կեղծ ցածր արժեքներ, հետևաբար անհրաժեշտ է մշակել արտադրական կանեփի նմուշառման համար նախատեսված հատուկ մեթոդիկա:

4. Բերված չէ արտադրական կանեփի համար նախատեսված հատուկ հետազոտման մեթոդ, որը թույլ կտար տարբերակել մշակման համար թույլատրված տեսակները թմրամիջոց պարունակող տեսակներից:

Արտասահմանում, թեև արտադրական կանեփի վերամշակման վերաբերյալ օրենքներն ընդունվել են վաղուց, սակայն մինչ օրս, ինչպես նշվել է վերևում, արտադրական կանեփի նմուշառումը և հետազոտությունն իրականացվում է թմրամիջոցներ հայտնաբերելու համար մշակված մեթոդներով, և համաձայն կիրառվող մեթոդիկայի, կանեփի բույսի կամ կանեփից ստացված բուսական մասնիկների հետազոտությունն իրականացվում է՝

- մասնիկների արտաքին զննությամբ (ցողունների, ծաղկաբույլերի, ցողունային տերևների, սերմերի առկայության, գույնի և հոտի որոշում),
- մասնիկների անատոմիական առանձնահատկությունների որոշմամբ,
- տետրահիդրոկանաբինոլի քանակության որոշմամբ (գազ, գազահեղուկ քրոմատագրման և այլ քանակական մեթոդով):

Փորձագիտական հետազոտության շրջանակներում, եթե տետրահիդրոկանաբինոլի քանակությունը 0,3 տոկոսը գերազանցում է, ապա փորձագետը հետազոտելի օբյեկտը կարող է դիտարկել որպես կանեփից ստացվող թմրամիջոց է, քանի որ չկան տարբերակիչ այլ հատկանիշներ, որոնցով բուսական օբյեկտը կոասակարգվի որպես արտադրական կանեփ: Նշենք նաև, որ այլ պարագայում, օրինակ քրեական վարույթի շրջանակներում ներկայացված բուսական օբյեկտի բաղադրության մեջ՝ անգամ տետրահիդրոկանաբինոլի հետքային քանակության դեպքում, այն որակվում է որպես թմրամիջոց (մարիխուանա, հաշիշ կամ կանեփ բույս): Հաշիշ առնելով այս հանգամանքը՝ վիճելի դեպքերում կարող են առաջ գալ հակասություններ:

Արդյունաբերական կանեփ արտադրելու համար հսկայական մարտահրավերներ կան, ինչպիսիք են բերքի կենսունակության ապահովումը, մատակարարման շղթայի որոնումը, լայնածավալ մշակության տեխնոլոգիաների ներդրումը, սպառողական շուկաների որոնումը՝

ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում: Այս ամենի հետ մեկտեղ՝ պետք է հաշվի առնել արտադրական կանեփի արտադրության զարգացման հետ զուգընթաց կանեփի բույսից ստացվող թմրամիջոցների ապօրինի շրջանառության աճման ռիսկերը: Հաշվի առնելով բազմաթիվ գործոններ, որոնք կարող են ազդել արդյունաբերական կանեփի փորձարկման արդյունքների վրա, պետք է սահմանվեն նկարագրական և խիստ նմուշառման փորձարկման մեթոդներ՝ ստանդարտացնելու և հետևողական արդյունքների հասնելու համար, որում առանցքային նշանակություն ունի լաբորատոր փորձաքննությունների իրականացումը:

Այսպիսով, նախատեսվում է արդյոք Հայաստանի Հանրապետությունում մշակել արտադրական կանեփի նմուշառման և հետազոտողական վերահսկելի մեթոդական ուղղուցույցներ, որոնցում ներկայացված լինեն արտադրական կանեփի մշակման համար բույսի սորտերը, հատուկ նմուշառման մեթոդները, հետազոտման մեթոդները, արտադրության ընթացքում ի հայտ եկող ռիսկային գործոնները և այլն, որոնք և հնարավորություն կստեղծեն արտադրական կանեփի ոչ ռիսկային մշակմանն ու արտադրությանը՝ դրանով իսկ կանխելով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը:

Գրականության ցանկ

1. Сборник статей IX Международной научно-практической конференции, посвященной 70- летию Пензенского государственного аграрного университета. Пенза, 2021,- 220с..
2. Единая конвенция о наркотических средствах с поправками, внесенными в нее в соответствии с протоколом 1972 года о поправках к Единой конвенции о наркотических средствах 1961 года. Режим доступа: <https://normativ.kontur.ru/document?moduleId=1&documentId=70343> (дата обращения: 05.10.2021).
3. Гущина В.А., Сологуб И.И. Правовые аспекты выращивания и переработки конопли посевной // В сборнике: Инновационные технологии в АПК: теория и практика. 2021, с.35-39.
4. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165072>
5. Количественное определение некоторых наркотических средств методами газовой жидкостной хроматографии и УФ-спектроскопии : Метод. рекомендации / В. И. Сорокин, И. Г. Алексеев, Т. Б. Кимстач и др.; М-во внутр. дел Рос. Федерации. Эксперт.- криминалист. центр. - Москва: Эксперт.-криминалист. центр МВД России, 2000.- 46 с.
6. Определение вида наркотических средств получаемых из конопли и мака /Под редакцией доктора медицинских наук, профессора Э.А.Бабаяна. Методические рекомендации, Москва, -1995г, - 13с..
7. Серков В.А., Белоусов Р.О., Александрова М.Р., Давыдова О.К. Новый сорт конопли посевной милена, International agricultural journal, № 5 (371), 2019, с.16-18.
8. <https://www.glamour.ru/trends/dzhinsy-iz-konopli-puhovik-iz-cvetov-kak-brendy-starayutsya-stat-ekologichnee>
9. https://unis.unvienna.org/pdf/2022/INCB/INCB_2021_Report_R.pdf
10. Кабунина И.В. Современная структура мирового рынка производства конопли/Работа выполнена в рамках Государственного задания ФГБНУ«Федеральный научный центр лубяных культур» (№ 0477-2019-0021).

АНАЛИЗ ПРОБЛЕМ ПРОИЗВОДСТВА, ПЕРЕРАБОТКИ И ПРОВЕДЕНИЯ ЭКСПЕРТИЗЫ ПРОМЫШЛЕННОЙ КОНОПЛИ

Хачатрян М.В., Элиазян Д.С., Казарян Г.К., Восканян П.С.

В данной статье рассматриваются проблемы производства, переработки и проведения экспертизы промышленной конопли, а также анализируются существующие пробелы в их законодательном регулировании. Выделяются и описываются многочисленные возможности и преимущества использования технической конопли в контексте получения ценного растительного масла, волокна, целлюлозы, строительного материала и т.д.. Значительное внимание уделяется вопросам пробоподготовки и испытания проб, а также раскрываются другие характерные признаки относящиеся к технической конопле. Статья подводит некоторые итоги изучения реально существующих противоречий при реализации политики борьбы с незаконным оборотом наркотиков и становлением и расширением промышленной культивации конопли.

Ключевые слова: конопля, промышленная конопля, тетрагидроканнабинол, каннабинол, каннабидиол, наркотики.

ANALYSIS OF PROBLEMS OF PRODUCTION, PROCESSING AND EXAMINATION OF INDUSTRIAL HEMP

Khachatryan M., Eliazyan D., Ghazaryan G., Voskanyan P.

This article discusses the problems of production, processing and examination of industrial hemp, as well as analyzes the existing gaps in their legislative regulation. Various possibilities and advantages of using technical hemp in order to get valuable vegetable oil, fiber, cellulose, building material, etc., are highlighted and described. Considerable attention is paid to sample preparation and testing, as well as to other features of technical hemp. The article also considers the contradictions between the policy of combating drugs and their illegal trafficking together with the development of hemp production.

Keywords: hemp, industrial hemp, tetrahydrocannabinol, cannabinol, cannabidiol, drugs.

Ներկայացվել է խմբագրության 08.04.2023

Ընդունվել է տպագրության 13.06.2023